Աիդա Սարհատյան

ԹՈՒՄԱՆՅԱՆ – 150

(հատված զեկուցումից)

Ի՞նչ ասել Թումանյանի մասին, որ ասված չլինի. ասել, ասել, որ *բազում պոետների մեջ նա՞է անհաս Արարատը մեր նոր քերթության.* այս միտքը վաղուց բանաձևել է Մեծն Չարենցը, կրկնել հայ և այլազգի գրականագետների ու նրա լեզվարվեստը մեկնող լեզվաբանների՝ արդեն 100 տարի հնչեցրած գնահատանքի ու մեծարման խոսքե՞րը նրա պոեմների ու քառյակների, նրա պատմվածքների ու հրաշալի հեքիաթների, մանկական բանաստեղծությունների ու բնագրերին անգամ գերազանցող թարգմանությունների մասին, ասել, որ յուրաքանչյուր ընթերցող իր Թումանյա՞նն ունի ու նրա արձակ ու չափածո երկերում գտնու՞մ է իրեն, սիրում ու ընկալում նրան յուրովի՞, անկախ տարիքից՝ մանուկ, թե ծեր… սա էլ ասում ենք բոլորս…

Ու թո՛ղ որ նորեն ասենք՝ նրա թե՛ արձակ, թե՛ չափածո ստեղծագործություններն ունեն թեմային համահունչ լեզվական-արտահայտչական անթերի միջոցներ, նրանց քերականական-շարահյուսական կառույցներն ընտրված են անգերազանցելի վարպետությամբ, նրա քնարերգությունը միջնադարյան մանրանկարչության գույներն ու ճարտարապետական կառույցների անզուգական, անձեռակերտ շինվածքն է հիշեցնում և ժողովրդի ստեղծած մեղեդիները՝ մերթ որպես այնքա՛ն մերը դարձած օպերային մեղեդիներ, մեներգեր ու խմբերգեր, որպես «Անուշ»-ի **Նախերգանք** ու **Ամպի տակից**… Մերթ լսում ենք սիրուց խենթացած Սարոյի շվիի թախծամրմունջ ելևէջները, մերթ տեսնում ասես կենդանի ու հարազատ Գիքորին՝ խոշոր աչքերում արցունքի վճիտ կաթիլներ, տեսնում ենք նրա քնարերգության ու արձակի սիրելի երկերը կինոկադրերի պես, լսում մեղեդիների պես ու այն խոր հառաչանքն ենք կիսում նրա հետ, որ ջրվեժում է նրա հոգուց ու հասնում տիեզերական անհուններին…

Ո՞վ է մեզ համար Թումանյանը…

Նա մերթ հառնում է որպես դպրոցական պատանի, որ սերը սրտում դաս է սերտում, մերթ որպես գյուղի Գիքորների ու Մարոների կորուստը սգացող ընկեր կամ ձեռքերը խոնարհ կրծքին դրած ժիր մի մանուկ, որ հասակ է առնում պապերի

օրհնանքը շուրթերին, որ հետո ինքն էլ բոլոր երեխաներին օրհներ՝ Ապրե՛ք երեխեք, բայց մեզ պես չապրեք… Մերթ հառնում է նա արևոտ մի ժպիտով՝ արևոտ մի պատգամ շուրթին՝ Արևի՛ պես նայեք մարդկանց, մերթ նահապետական գյուղաշխարհն ու մարդկանց իրենց կենցաղով ու ադաթներով հանրագիտարանային խորություն ունեցող գրական գոհարներ դարձրած պոետ, որի հերոսները անաղարտ են ու մաքուր, երբեմն դաժան ու կոշտ՝ երկու դեպքում էլ Լոռու՝ ինքնատիպորեն գեղեցիկ բնության նման… Մերթ էլ տեսնում ենք նրան՝ կովկասյան անկրկնելի թամադային՝ հաշտության ու խաղաղության պատգամ հնչեցնելիս… Այնուհետ… այնուհետև… հոգեհանգստյան նվագներ՝ որպես հոգուց դուրս ժայթքած ողբի ծվեններ… Ի վերջո իր ժողովրդի անհուն հոգսերի, հայոց վշտի մեծ ծովի մեջ **լող տալու** տառապանքից ու մեր **կանաչ լեռներում պայծառ առավոտներ** տեսնելու երազանքներից իմաստնացած բանաստեղծը պիտի արևերես հաներ չարի ու բարու, կյանքի ու մահվան իմաստն ամփոփող խորախորհուրդ մանրակերտները՝ քառյակները…

Ամենայն հայոց բանաստեղծի ու նրա ստեղծագործությունների մասին հրապարակված ուսումնասիրությունների ահռելի հարստության կա, բայց նրա մասին ասելիքն անսպառ է. քննության են արժանի նրա յուրաքանչյուր բառ ու տող՝ գրականագիտական ու լեզվաբանական ուսումնասիրությունների առումներով…

Թումանյանին պոետ սահմանող Արարիչը նրան անկրկնելի աստվածային ձիրքերի հետ մեկտեղ պարգևել է նաև ժողովրդական բանաստեղծ համարվելու միակ մենաշնորհը՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾ կոչումը…

gggggggggggggg